Հաստատված է՝

ԵՊԼՀ գիտական խորհրդի

03.11.2018թ. N 1 նիստի որոշմամբ

ԵՊԼՀ գիտական խորհրդի նախագահ՝

_____ Կ. Կարությունյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի (այսուհետ՝ ԵՊԼՀ) լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության (այսուհետ՝ Մրցանակաբաշխություն) կազմակերպման և անցկացման կարգը:
2. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անցկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարի: Նպատակն է խրախուսել ԵՊԼՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում սովորող ուսանողների առաջադիմությունը և խթանել հետազոտական և հասարակական ակտիվությունը:
3. Մրցանակաբաշխությունն անցկացվում է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում և ամփոփվում է մինչև ուսանողության և երիտասարդության տոնը՝ մայիսի 16-ը:
4. Սույն կանոնակարգը հաստատում է ԵՊԼՀ գիտական խորհուրդը. դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

5. Մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմը հաստատվում է ԵՊԼՀ ռեկտորի հրամանով:
6. Թեկնածուների առաջադրման, հաղթողների ընտրության, մրցանակաբաշխության անցկացման, մրցանակների հանձման պաշտոնական արարողության և այլ

աշխատանքների կազմակերպման համար Հանձնաժողովը հրավիրում է նիստեր և աշխատանքային խորհրդակցություններ:

7. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների 2/3-ով: Մրցանակաբաշխության հաղթողների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակբաշխության անցկացման օրը հրապարակման ենթակա չեն:

III. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել այն բոլոր ուսանողները, որոնք առնվազն 2 կիսամյակ եղել են ԵՊԼՀ ուսանող, վերջին երկու կիսամյակների ընթացքում ունեցել են բարձր առաջադիմություն (ՄՈԳ-ը՝ 3.6 և բարձր), ինչպես նաև ունեն սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ձեռքբերումները: Մրցանակաբաշխությանը մասնակցելու (որպես թեկնածու առաջադրվելու) համար ուսանողը, սահմանված կարգի համաձայն, պետք է ներկայացնի համապատասխան հայտ և անհրաժեշտ փաստաթղթեր:
9. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 2 ամիս առաջ Հանձնաժողովը ԵՊԼՀ կայքում հայտարարում է մրցանակաբաշխության անցկացման պայմանների և թեկնածուների առաջադրման մասին: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ թղթային կամ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով, որոնք հաստատվում են Հանձնաժողովի կողմից: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 1 ամիս առաջ, սահմանում է Հանձնաժողովը:
10. Մրցանակաբաշխությանը հավակնորդ ուսանողների հայտերը և կից փաստաթղթերը ներկայացվում են ԵՊԼՀ ընդհանուր բաժին:
11. «ԵՊԼՀ լավագույն ուսանող» մրցանակակիր որոշելու համար հաշվի են առնվում նաև ուսանողի հետևյալ ձեռքբերումները.
    1) ներգրավվածություն հետազոտական աշխատանքներում,
    2) մասնակցություն ներհամալսարանական հասարակական կյանքին,
    3) արտահամալսարանական ակտիվություն մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում:
12. Մրցանակաբաշխության մասնակցի հայտին կից ուսանողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.
    1) դիմում-հիմնավորում,
    2) պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների կողմից տրված բնութագիր (առավելագույնը երկու բնութագիր),
    3) ուսանողական խորհրդի նախագահի կողմից տրված բնութագիր,
    4) տպագրված գիտական աշխատանքների պատճենները կամ դրանք հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),
    5) ներհամալսարանական և (կամ) արտահամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր,
    6) 11-րդ կետում նշված ձեռքբերումները հաստատող այլ փաստաթղթեր և նյութեր:

Ներկայացված բնութագրերը և փաստաթղթերը պետք է տրամադրեն հստակ և մանրամասն տեղեկատվություն ուսանողի՝ սույն կանոնակարգի 11-րդ կետում նշված ձեռքբերումների մասին:

Առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովին տրամադրում է ԵՊԼՀ համապատասխան ստորաբաժանումը:

13. Մրցանակաբաշխության հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, ԵՊԼՀ կայքում հրատարակվում է հայտ ներկայացրած ուսանողների ցանկը:

IV. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Մրցանակաբաշխության հաղթողի ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով՝ միավորային գնահատման միջոցով: Մրցույթին մասնակից ուսանողի միավորը հաշվարկվում է սույն կանոնակարգի 15- 18-րդ կետերի համաձայն:
15. Հանձնաժողովը դիտարկում է հայտ ներկայացրած ուսանողների համապատասխանությունը մրցանակաբաշխության պահանջներին և ըստ սույն կանոնակարգի սահմանված չափանիշների՝ կատարում հայտերի գնահատում:
16. Թեկնածուների ուսման առաջադիմությունն առավելագույնը գնահատվում է 20 միավորով: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանող-թեկնածուների դեպքում հաշվարկվում է նաև բակալավրիատի ՄՈԳ-ը: Վերջին 2 կիսամյակի արդյունքում 3.9 և դրանից բարձր ՄՈԳ ունեցող ուսանողը գնահատվում է 20, 3.8-ից 3.9՝ 15, 3.7-ից 3.8՝ 10, 3.6-ից 3.7՝ 5 միավորներով:
17. Թեկնածուների՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվածության գնահատականը ձևավորվում է ստորև նշված ենթակետերով՝ թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով (առավելագույնը 20 միավոր)՝
    1) Ազգային գիտաժողովների, սեմինարների, համաժողովների կարդացած յուրաքանչյուր զեկուցման համար տրվում է 1 միավոր, իսկ միջազգայինի դեպքում՝ 2 միավոր:
    2) Գիտական ամսագրերում մեկ տպագրված հոդվածի համար տրվում է 5 միավոր, երկու և ավելի հոդվածների համար՝ 10 միավոր:
    3) Միջազգային մրցանակի կամ օլիմպիադայի դիպլոմի արժանանալու դեպքում տրվում է 2 միավոր (յուրաքանչյուրի համար), առավելագույնը՝ 4 միավոր:
18. Թեկնածուների ներհամալսարանական կյանքին մասնակցության գնահատականը ձևավորվում է ստորև նշված ենթակետերով՝ թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով (առավելագույնը 15 միավոր)՝
    1) Ֆակուլտետի ուսանողական հասարակական միջոցառումներում ակտիվ մասնակցության համար (մասնակցություն տարբեր միջոցառումներին՝ բացառությամբ այն միջոցառումների, որոնք դիտարկվել են 17-րդ կետում) թեկնածուին տրվում է 2-ից 4 միավոր:

2) Ֆակուլտետի ուսանողական հասարակական միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին մասնակցության համար թեկնածուին տրվում է 3-ից 6 միավոր:
3) Ֆակուլտետի ՈՒԽ անդամներին, ֆակուլտետի խորհրդի անդամներին տրվում է 3 միավոր:
4) Համալսարանական հասարակական աշխատանքներում ակտիվ գործունեության համար տրվում է 5-ից 8 միավոր: ԵՊԼՀ ուսանողական կազմակերպությունների կենտրոնական մարմիններում ընտրված ուսանողներին տրվում է 2 միավոր:

19. ԵՊԼՀ յուրաքանչյուր ֆակուլտետից հաղթող է ճանաչվում մեկական ուսանող:
20. Հաղթողները պարգևատրվում է պատվոգրով և մրցանակաբաշխության համար ռեկտորատի կողմից սահմանված մրցանակով: ԵՊԼՀ ռեկտորատն ու ԵՊԼՀ ուսանողական խորհուրդը կարող են նաև սահմանել մրցույթի հաղթողների խրախուսման այլ միջոցներ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

21. Հանձնաժողովի որոշումները կարող է բողոքարկվել «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության արդյունքների հրապարակման օրվանից հետո՝ մեկօրյա ժամկետում: Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության կամ ԵՊԼՀ ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ սույն կանոնակարգի խախտումների ի հայտ գալու դեպքում ԵՊԼՀ ռեկտորը հանձնարարում է հանձնաժողովին իրականացնել կրկնակի քննարկում: